Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար սկաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/32 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/32-2 պայմանագրում 2019 թվականի հունվարի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել պայմանգրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը:

Փոփոխության նկարագրություն Կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում փոփոխություն կատարելու մասին /կցվում է/:

Փոփոխության հիմնավորում ՀՀ կառավարության 04/05/2017 թ N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

26.12.2018թ. կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/32-2 «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան

«15» «01» 2019 թ.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Թարվերդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Դ. Մարկոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 26.12.2018թ. կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-18/32-2 «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել մինչև 2019 թվականի փետրվարի 4-ը ներառյալ:

1.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունի հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
ք. Երևան, Թաիրովի 15
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն,
ՀՀ 900018001843
ՀՎՀՀ 02511401
Տնօրեն՝

_____ Ա. Թարվերդյան
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«Նորմա-պլյուս» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Մաշտոցի պող. 2 շենք, տարածք 60
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570002079340100
ՀՎՀՀ 00053663
Տնօրեն

_____ Դ. Մարկոսյան
(ստորագրություն)

Կ.Տ